



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի հունվարի 11-ի N 1-Ա որոշման հավելվածը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ *Մհեր Եղիազարյանին* 2019 թվականի փետրվարի 14-ին մեկ օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից անցկացվող դասընթացին մասնակցելու համար:

2. *Մհեր Եղիազարյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ *Անդրանիկ Ասատրյանի* վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (*հաշվապահական հաշվառման բաժնին*)՝ գործուղման հետ կապված ծախսերը (*օրապահիկ և ճանապարհածախս*) կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ *Մհեր Եղիազարյանին* գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի փետրվարի 12  
ք. Հրազդան  
N 15-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
  
